

ներ եւ բազում վշտի պատճառ լինող ոչ յերկարեմք այլ թողումք յառուր դասասանին եւ սովորի ահեղ ասեցին Քսի» (Տ. Յակոբ Գ. Կեարացի) :

Այսպէս կը ծախուին իր գիրքերն ու այն այգին՝ որուն վրայ այնքան գովեստով խօսած էր Սիմէոն դպիր Լեհացի: Իսկ գիրքերուն մէկ մասը Տ. Յակոբ քհ. Կեսարացի կը նուիրէ Կեսարիոյ Ս. Սարգիս եկեղեցիին եւ այդ առթիւ է որ գրի կ'առնէ իր հօրեղբօրը կենսագրութիւնը :

Դժբախտաբար Գրիգոր վրդ. Կեսարացիի գերեզմանը, որուն Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին դրուելը կը հաստատէ նաև Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան (Սրահուլայ Պարտուխան, հրատ. Տօքթ. Վ. Թորգոմեանի, Վիեննա, 1913, էջ 74), այսօր անյայտ է :